ԼԵՌՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Համբարձցես ըզմեզ Տէ՛ր, տուեալ քան ըզզայի զթաբօրական ըզլեառն, յերկ-նաբերձ և յիմանալի խորանսդ:

Շարական Վարդավառի

Ճգնազգեաց Նորայր Սրբազանին

Երբեմն կեանքէն և աշխարհէն ալ յոգնած՝
Բարձունքներուն կ'երթայ հոգիս, սլացիկ:
Բարձունքներու՝ իմանալի, երկնայած,
Որոնց հասնիլ զո՛ւր կը տենչան հէք մարդիկ:

Խորհուրդ մը հոն կ'իջնէ վերէն ամէն օր,
Խորհո՛ւրդ մ'անհաս, խորին խորհուրդ և անհուն,
Որ կը լեցնէ և կ'ընէ քեզ մարդ մը նոր,
Երկրպագու՝ ընդդէմ երկնի աստղերուն:

Թաբօրներուն այդ հեռաւոր, մեկուսի,
Վերացո՛ւր զիս, անէացո՛ւր քիչ առ քիչ,
Հոն հաղորդուիլ տուր ինձ նըման Յիսուսի,

Աստուածութեանդ խորհուրդովը նորոգիչ:
Այդ լուսեղէն կատարներուն երկնաբերձ՝
Փառացդ հագցուր-ինծի շողեր և հանդերձ:

ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@